

ԿԱՐՄԻՐ ԶԱՏԿԻ ԳԻՇԵՐԸ

(ՊԱՍԻՒՅԻ Յ. Կօրոլենկո-ից)

Նուէր «Մուրճ»-ի ընթերցողներին

Ազատ թարգմանութիւն Գ. Ի. Գ. Ո. Վ. Ա. Յ. Ա. Ն. Խ. Ա. Ա.

187* աւագ շաբաթ օրն էր.

Երեկոյի մթնշաղը արդէն տարածել էր իւր թևերը խաղաղած երկրի վերայ: Յերեկւանից տաքացած և հիմա՝ գարնանալին իրիկնաղիմի թեթև շշունչով հովացած երկիրը շնչում էր լիասիրտն: Այդ շշունչից ահա փառահեղ, վառվոռուն և աստղալից երկնքի հետ խաղալով, դուրս էին ծորում սպիտակաւուն թուխաեր, ինչպէս բուրառի ծխի քուլաներ, որոնք բարձրանում էին առաջիկայ տօնին գիմաւորելու:

Հանդարտ էր Մ. փոքրիկ նահանգական քաղաքը, որ ամբողջովին զովացել էր մթնշաղ երեկոյի հովով, լոել էր, սպասելով այն պանծալի բուքէին, երբ մայր-եկեղեցու զանգակատան բարձունքից պիտի հնչէր առաջին հարւածը: Բայց քաղաքը քնած չէր: Խոնաւ մթութեան հովանու տակ, լոիկ, անմարդի փողոցների սուերների մէջ նկատելի էր մի ամոք-սպասողական գրութիւն: Երբեմն միայն անցնում էր ուշացած, վաստակաբէկ բանուորներից մինը, որին տօնը հանդիպել էր համարեած ծանր, անհամբոյր աշխատանքի մէջ. երբեմն գոգոռում էր կառապանի սայլակը—և դարձեալ տիրում էր անմիմունչ հանդարտութիւն... Կեանքը փողոցից փախուստ էր տեղ աները, փարթամ պալատները, համեստ խրճիթները և այնտեղ պահել:

Թէ քաղաքի, թէ գաշտերի և թէ բոլոր երկրի վրայ լսել էր զերահաս յարութեան տօնի անտեսանելի շշունչը:

Լուսինը չէր բարձրանում և քաղաքը մնացել էր այն բլրակի սուերի տակ, որի վրայ նկատում էր մի մեծ, մռայլ շինութիւն: Այդ շինութեան տարօրինակ, ուղղաձիգ և խիստ գծերը մռայլ նկարում էին աստղալից երկնի երեսին, մթին դռները լուսին տալով հազիւ հազ որոշում էին ստերածածք պատի միջից և անկիւնի չորս աշտարակները դուրս էին ցցւել երկնքում սրածայր գագաթներով:

Բայց ահա մայր-եկեղեցու զանգակատան բարձունքից դուրս թռաւ մտահոգ գիշերւայ զգայուն օդի մէջ առաջին դողլոջ հարւածը... երկրորդը... երրորդը... Մի բոսկից յետոյ զանազան տեղերում, զանազան ձևերով հնչում, դողլոջում և երգում էին զանգակները և այդ հնչիւնները հիւսելով կազմում էին մի զօրեղ, ինքնուրոյն ներգաշնակութիւն և տատանւում էին հանդարտ, կարծես շրջան էին առնում եթերի ծալքերում:

Այն մթին շինութիւնից, որ ստերով ծածկել էր քաղաքը, նոյնպէս լսեց խոպոտ, կերկերուն մի զողանջիւն, որ կարծես խըղճալի անզօրութեամբ հե-հեռում էր զօրեղ ներգաշնակութեան յետից համելու եթերային բարձրութեան մէջ:

Զայնը լսեց... Հնչիւնները հալւեցան օդում, իսկ գիշերային հանդարտութիւնը սկսեց աստիճանաբար իւր գահը բարձրանալ, միայն գեռ երկար, մթնշղի մէջ նշմարւում էր մի անորոշ, առկայծող արձագանք որպէս անտեսանելի օդաձիգ լարի դողլոջ: Տների ճրագները մարում էին, եկեղեցիների պատուհանները վառվառում: Աշխարհը 187* դարձեալ պատրաստում էր համբաւելու եղբայրութեան, սիրոյ և խաղաղութեան հին նշանաբանը:

Մռայլ շինութեան մթին դռների ախերը ճռռաւացին: Զին-որների մի խմբակ մթութեան մէջ հրացանները չըխկչըխկացնելով դուրս եկաւ գիշերապահներին փոխարինելու: Նա մօտենում էր շինութեան անկիւններին առժամանակ կանգ առնելով պահակատեղերի մօտ: Այդ մթին մարդկանցին խմբից չափած-կշռած քայլերով դուրս էր գալիս մի կերպարանք, իսկ նախկին պահապանը կարծես խորասուզում էր այդ անորոշութեամբ մթին տւող խմբակի մէջ:

Սպա լոռւմբը դարձեալ առաջ էր շարժւում պտտելով բանտի բարձր պատերի շորս կողմը։

Արևմտեան կողմը կանգնած պահապանին փոխարինելու դուրս եկաւ մի երիտասարդ նորակոչ։ Նորա շարժմունքներից դեռ ևս չէր անհետացել գիւղական անտաշութիւնը, մատաղ կերպարանքը զեռ ևս պահապանել էր լարւած ուշադրութեան արտայալութիւն, որ նկատելի է առաջին անգամ պատասխանատու պաշտօն ստանձնող անձանց դէմքին։ Նա երեսը պատին դարձրեց, հրացանը չխկացնելով երկու քայլ արաւ և մի կիսաշրջան կատարելով, կանգնեց ուս-առուս պահապանի մօտ։ Հին պահապանը, իւր գլուխը թեթեւութեամբ նորեկի կողմը դարձնելով, սկսեց սովորական կարգով նրան խրատներ կարդալ։

—Անկիւնից անկիւն, լաւ նացիր, չքնես, չնիրհես, արագ-արագ ասում էր և նրա մոխրագոյն աչքերում թափանցում էր ինչ որ մի տեսակ առանձին տիրութիւն։

—Հասկացմար, հարցրեց տասնապետը։

—Տակե-տօչհօ (այս)։

—Դէ, լաւ նացիր, ասաց նա խստութեամբ. ասկա տոնը փոխելով, շարունակեց աւելի մեղմօրէն։

—Հա, ոչինչ, Ֆաղէն, մի՛ վախիր, հօ կնիկարմատ չես, սատանացից հօ վախենալու չես...»

—Ինչու միայն սատանացից, միամտաբար պատասխանեց Ֆաղէնը և ասկա մտազբաղ աւելացրեց,—համա, ախպէր, սիրտս ինչ որ վատ բան է նախագուշակում։

Այս պարզ, միամիտ, համարեա մանկական խոսառվանութիւնը ծիծաղ բարձրացրեց զինւորների խմբի մէջ։

Տես, ահա, բարեկամ, գիւղը շատ հեռու չէ, ասաց տասնապետը մի արհամարհական ցաւակցութեամբ և կտրուկ հրամայեց։

—Ружья вольно! шагомъ маршъ! ¹⁾ պահապան ²⁾ խումբը

¹⁾ Հրացաններն ազատ, քաւեցէք.

²⁾ Կարայլ—մենք թարգմանում ենք—պահապան, իսկ часовой—պահող։

քայլերի հաւասարաշափ բաղխումով ծածկւեց անկիւնի յետեւ և այդ բաղխումը շուտով լրեց։ Պահնորդը ուսին դրեց հրացանը և սկսեց հանդարա մանգալ պատի մօտով։

Բանոտի մէջ՝ զանգակի վերջին հարւածի հետ՝ սկսեց մի շարժ-մունք։ Վաղուց բանտի մռայլ և թախծալի գիշերը այդպիսի շար-ժումն չէր տեսել. Տօնական շնորհաւորութիւնը կարծես ազատու-թեան համբաւ լինէր բանտի բնակիչների համար։ Արգելարանների մե դուները մինը միւսի յետեւից բացւում էին։ Մարդիկ մոխրագոյն վերարկուներով, գունաւոր, ճակատու գրական կտորը մէջքին, երկար շարքերով գնում էին նրբանցքի միջով զոյգ-զոյգ և մոնում բանտի եկեղեցին, որ վառվում էր ճրագների լուսով։ Նոքա գալիս էին աջ կողմից, ցածրից բարձրանում էին սանդուխով և բարձրից ցած էին իջնում. խուլ աղմուկի միջից երեխնակս լսում էր հրացանի զրնգոց և կապանքների սահուն չխչխոց։ Մոխրագոյն խաժամուժը մոնելով ընդարձակ եկեղեցին, լցւում էր վանդակով շրջափակւած տեղերը և այնուեղ լուսում էր։ Եկեղեցու պատուհաններու մնոյնպէս նկատելի էին երկաթեայ ամուր վանդակներ։

Բանուը գտարկել էր։ Միայն անկիւնի չորս աշտարակներում չորս մենաւոր բանտարկեալներ մռայլ թափառում էին իրանց լսցե-րի մի անկիւնից միւսը։ Երբեմն նոքա ականջները դէմ էին անում դռանը և ազահութեամբ կլանում էին եկեղեցուց դուրս թռչող երգի բեկորները։

Մէկ էլ ընդհանուր արգելարաններից մինում, թախտի վրայ պառկած էր մի հիւանդ։ Վերակացւին յայտնեցին այդ յանկարծա-հաս հիւանդի մասին։ Նա մօտեցաւ հիւանդին, երբ կալանաւորներին տանում էին եկեղեցի, և խոնարհ ելով նացեց նորա աչքերին, որ վառւում էին մի տարօրինակ փայլով և մի անմիտ արտայացտու-թեամբ ուղղւած էին տարածութեան գիրկը։

— Իւանով, լսիր, նւանով, կանչեց վերակացուն հիւանդին։

Կալանաւորը ուշը չդարձրեց. Նա մրմնջում էր ինչ որ մի անո-րոշ-անհասկանալի բան. ձայնը խուզու էր, բորբոք շրթունքները դողլոցում էին ձգնութեամբ։

—Վաղը հիւրանոյ տանելու կարգադրեց վերակացուն և արդելարանի դրան առաջ թողնելով նրբանցքի պահապաններից մինին, զուրս եկաւ: Պահապանը ուշադրութեամբ նայեց ջերմող հիւանդին և դլուխը շարժեց:

—Եց փախստական, փախստական, քո հաշիւը վերջոցաւ, ասաց վերակացուն, և տեսնելով, որ այլես այտեղ անելու բան չ'ունի, անցաւ նրբանցքով դէպի եկեղեցին և սկսեց լսել ժամերգութիւնը՝ շուտ շուտ գետին կուանալով երկրպագութեան:

Դարտակ արգելարանը երբեմնապէս աղմկում էր հիւանդի անորոշ բացականչութիւններով: Դա մի շափահաս, զօրեղ և ամրակազմ մարդ էր: Նա զառանցում էր մօտիկ անցեալը և նրա կերպարանքը արտայայտում էր մի դառն տանջանք:

Բաղդը այդ փախստականի հետ մի անպիտան խաղ խաղաց: Հայրենիքի փառվառն կարօտով տոգորւած, նա կտրեց հազարաւոր վերստեր: անցնելով վայրենի լեռների և տայգաների¹⁾ վրայով, կրեց հազարաւոր նեղութիւն և զրկանք, առաջնորդւած այն յուսով, «թէ մէկ տեսնեմ... մի ամիս, մի շաբաթ... ապրեմ մերնց մօտ... իսկ այնուհետև... թէ կուզ... նոյն օրին ընկնեմ» Հայրենիքից հարիւր վերստ հեռու, նա ընկաւ այս բանաը...

Բայց ահա լուեց անորոշ զառանցանքը. փախստականի աչքերը լայն բացւեցան, կուրծքը սկսեց շնչել հաւասարաչափ, միաբարախ... նրա տաք զլիսում երեան եկան աւելի բերկրառիթ ցնորքներ...

Սոսափում է դայգան... նրան ծանօթ է այդ հաւասարաչափ, մողեկան և ազատ սոսափիւնը. նա սովորել էր որոշել անտառի ձախնը, ամեն մի ծառի խօսակցութիւնը: Մեծափառ սոճիները հնչում են իրանց խիտ, մթին կանաչով բարձր, բարձր... եղենիները փափսում են ձագական և խուլ... ուրախ, պայծառ սաղարթը շարժում է ճկուն ճուղը. բարդին դողդոջում և ճքճքում է հրաշալի, երկչուտ տերեւներով... Սուլում է ազատ թուչունը. առւակը աշխոյժ շատախօսութեամբ թուչկոտում է քարոտ ձորակի մէջ և տայգայի

¹⁾ Տայրա—ազգպէս են կոչում Սիբիրի խիտ, անմարդակոխ և հաճախուտ անտառները:

հետախոյզները ¹⁾—կրկուան կաչաղակների երամը—թռչում են տեղերով, որտեղից խիտ տայգայի միջով անցնում է փախստականը:

Կարծես տայգայի քամու ազատ հոսանքը բուրեց հիւանդի երեսին: Նա բարձրացաւ, խորը հոգոց հանեց: Աչքերը ուշաղիր արտայայտութեամբ առաջ են նայում... բայց յանկարծ նոցա մէջ ինչոր գիտակցութեան նման մի բան ցոլաց... Սովոր փախստականը իւր առաջ մի արտասովոր բան տեսաւ.—բաց դուռ:

Զօրեղ բնագդումը ցնցեց ամբողջ մարմինը, որ խախտել էր հիւանդութիւնից: Զառանցանքի նշանները արագ անցայտանում կամ խմբում էին այն մտապատկերի շուրջը, որ լուսեղ փայլով թափանցել էր այդ խոսի մէջ. մենակ եմ... բաց է դուռը...

Միրոպէից նա կանգնած էր յատակին: Բորբոք գլխի բոլոր ջերմը կարծես թափեց նրա աչքերը, որոնք նայում էին մի տեսակ հաւասարաշափ, յամառ, սարսափելի...

Ինչոր մէկը դուրս գալով եկեղեցուց, վայրկենաչափ բաց արաւ նրա դուռը... հեռաւորութիւնից մեղմացած երգի կանոնաւոր ալիքները հասան փախստականի ականջին և դարձեալ խլացան: Նրա դժգոյն կերպարանքի վրայ երևաց մի տեսակ թմրութիւն. աչքերը մթնեցան և մաքին ընկաւ հին, ցնորալի, փայփայած պատկերը. հանդարտ զիշեր... եղենու սոսափ, որ թուխ ճղներով հովանաւորում է հայրենի գիւղի հին մատուռը... հայրենակիցների խումբը... գետի ափի ճրագները և այս երգը... նա շատպել, փախել էր հէնց նրա մանր, որ այս բոլորը լսէ այնաեղ, իր տանը, հայրենի գիւղում... մինչդեռ, նրբանցքի մէջ, եկեղեցու դրան առաջ դեռ ևս եռանդով աղօթում էր վերակացուն.

Երիտասարդ նորակոչը հրացանն ուսին շրջում է պատի մօտով. նրա առաջ տարածւում է հարթ, ձիւնից նոր բացւած, հե-

¹⁾ Սիրիրի փախստականները պատմում են, որ խուլ տապակի մէջ կաչաղակները երամով ուղեկցում են խիտ անտառից անցնող փախստականին: Այն ժամանակ՝ երբ օրէնքով այդ փախստականներին սպանելը արգելւած չէր. Բուրիաթ որսորդները նոցա հետեւում էին կաչաղակների երամի կրկուոցով:

Ծան. Հեղ.

ռուն կորչող գաշտավայրը։ Թեթև քամին վազում է դաշտի վրայով, խշացնում է աղջպանքը, սուլում է հին տարւայ խոտերի չով և զինւորի հոգու մէջ արթնացնում է հանդարտ, տխուր մ բ-մունք։

Երիտասարդ սլահնորդը կանդ առաւ պատի մօտ, հրացանը ցած դրեց և ձեռքերը զնելով նրա բերանին, իսկ գլուխը ձեռքերի վրաց, խոր մտածմունքի մէջ ընկաւ։

Նա զեռ ևս պարզ չէր կարողանում երեակացել, թէ ինչու այս եղ է, տօնի այս հանդիսաւոր գիշերին, հրացանը ձեռին, պատի մօտ, անմարդի գաշտավայրի առաջ։

Առհասարակ նա զեռ խսկան գիւղացի էր—ուամիկ. զեռ շատ բան, որ գիտեն զինւորները, նա չէր հասկանում, ուստի և իղուր չէր, որ նրան «գիւղացի» էին կանչում բարկացնելու համար։ Երէկ չէ միւս օրը նա զեռ ազատ էր, տան, արտերի և իւր աշխատանքի տէրը... իսկ հիմա, անըմբռնելի, անորոշ, անբացատրելի սարսափը հետեւելով երիտասարդ, անտաշ գիւղական զաւակին ամեն մի քաղաքիտիւում, ամեն մի շարժմունքին, միշա լիշեցնում էր նրան ծառայութեան խստութիւնը։

Բայց այդ ըստէին նա մենակ էր... գաշտավայրի գատարկ տեսքը, որ փուլում էր նրա առաջ և աղջպանքի մէջ ծածանող քամու շւշոցը նրան շշնչում էին մի տեսակ անուշ նիրհ և երիտասարդ նորակոչի տաւաջ հանդէս են գալիս հայրենի պատկերները։ Նա ևս տեսնում է հայրենի գիւղը, որի վրացից վազում է միւնոյն քամին, և ճրոգներով լուսաւորւած եկեղեցին, և այն մթին եղենիները, որ նրա վրացից շարժում են կանաչ կատարները։

Երբեմն նա կարծես թէ ուշքի է գալիս և այն ժամանակ նրա մոխրագոյն աչքերում արտափայլում է տարակուսանք. այս ինչ բան է... գաշտ... հրացան... պատ... Մի վազրկեան նա լիշում է իրականութիւնը, բայց գիշերւայ քամու անորոշ շշնչոցը զարձեալ հանդէս է բերում ծանօթ պատկերներ, և զինւորը հրացանին լինած գարձեալ նիրհում է։

Պահնորդի կանգնած տեղից ոչ հեռու, պատի ծայրին երեւում է մի մթին իր.—Դա մարդու գլուխ է։ Փախստականը նայում է գաշտավայրի ծայրում դժւարութեամբ նշմարւող անտառի

սահմանագծին; Մայր-գիշերւայ ազատ, թարմ շունչը ազահաբար ծծելով, նրա կուրծքը լայնանում է; Նա ձեռքերով ցած է իջնում և հանդարտ սուրում է պատի վրայով:

Զանգակների ուրախ հնչիւնը զարթեցնում է գիշերային խաղղութիւնը: Քանտի եկեղեցու դուռը բացւեց.—դրանը թափոր պիտի լինի: Ներդաշնակ երգեցողութիւնը ալիքներով դուրս հոսեց եկեղեցուց: Զինւորը ցնցւեց, կանգնեց շիմ շիտակ, ցած առաւ գզակը, որ երեսը խաչ հանէ, և այդ գրութեան մէջ նա պապանձւեց:

Փախստականը գետնին հասնելով, արագութեամբ վագեց աղշորանքի մէջ:

—Կաց, կաց, սիրելի բարեկամ,—կոչում է պահնորդը սարսափահար բարձրացնելով հրացանը... Ահա, հասաւ նրա զիւին այն սարսափը, որից նա սարսուում էր,—անձեւ, սարսափելի, ի գէմա այդ մոխրագոյն կերպարանքի:

«Ծառայութիւն, պատասխանառութիւն, վայրկենաբար մոածեց զինւորը և, բռնելով հրացանը, նշան դրեց փախտականին: Հրացանի ոտը քաշելուց առաջ նա մի խղճալի տեսքով պլչեց աչքերը...»

Իսկ քաղաքի վրայով զարձեալ սլանում, շրջան է առնում եթերի մէջ ներդաշնակ, երգեցիկ և դայլայլիկ հնչիւնը, և բանտի հին զանգակը զարձեալ զարկուում և զողանջում է մի կերկերուն ձայնով որպէս զնդակահար թռոչնակի հոգոց: Իսկ պատի տակից ներդաշնակ հոսում են դէպի հետու զաշտավայրը հանդիսաւոր շարականի առաջին հնչիւնները. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Եւ յանկարծ ամեն բան խլացնելով պատի տակից որոտաց հրացանի հարւածը, նրան յետևեց թոյլ, անօգնական մի ճիչ դառն կսկիծով, և ապա, մի վայրկեան ամեն ինչ լոեց:

Միայն անմարդի դաշտավայրի հեռաւոր արձագանքը ախտոր արտունջով կրկնում էր հրացանի հարւածի վերջին արձագանքը: